## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՆԳՆ ԿՀ-2026 ՄՄԿ-1

ք. Երևան «12» 01 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մ.Մուրադյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1910 որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն ստանձնում է իրականացնել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 09.03.02.06..«Միջին մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի համար հաստատված՝ ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

### 2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1.Սույն պայմանագրով Կատարողին՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 387451200 ( երեք հարյուր ութսունյոթ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

### 3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

### 4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու՝ | Կատարող՝ |
| --- | --- |
| ՀՀ ՆԳՆ | «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 01361716 |
| Հ/Հ 900011047454 | Հ/Հ 900018005018 |
| ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝ | ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝ |
| ---------------------- Ա.Ֆիդանյան | ---------------------- Մ.Մուրադյան |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
«___» _____ 2026թ. կնքված
N ՀՀ ՆԳՆ ԿՀ-2026 ՄՄԿ-1 պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

/ հազ.դրամ/

| NN | *ծառայության անվանումը* | Ֆինանսավորումը 2026թ. ընթացքում՝ ՀՀ 2026թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | միջին մասնագիտական կրթության ծառայություն | 32 288.0 | 64 575.0 | 96 862.8 | 129 150.8 | 161 437.8 | 193 725.6 | 226 013.6 | 258 300.6 | 290 588.4 | 322 876.4 | 355 163.4 | 387 451.2 | 387 451,2 |

**Պ ա տ վ ի ր ա տ ու՝**
**ՀՀ ՆԳՆ**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 02882913**
**Հ/Հ 900011047454**
**ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝**

**------------------------------ Ա.Ֆիդանյան**

**Կ.Տ**

**Կ ա տ ա ր ո ղ՝**
**«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ**
**ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 01361716**
**Հ/Հ 900018005018**
**ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝**

**------------------------------ Մ.Մուրադյան**

**Կ.Տ**